ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ

Արա Հովհաննիսյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ)

Հիմնաբառեր. *Սփյուռք, համայնք, դասընթաց, պատմություն, ուսումնառություն, կարևորություն, մեթոդ, հետազոտական աշխատանք, քննարկում, վերլուծություն, համայնքային կազմակերպություն:*

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՅԺՄԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական սփյուռքի պատմության հանգամանալից ուսումնասիրությունը ունի կարևոր գիտական, գործնական-կիրառական, ինչպես նաև ուսումնամեթոդական նշանակություն: Հայկական սփյուռքի պատմության ուսումնասիրությունը շահեկան է հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության ամբողջացման տեսանկյունից, քանի որ առնվազն մեկուկես հազարամյակ հայ ժողովրդի մեծ զանգվածներ բնակվել են հայրենիքից դուրս, իսկ այսօր Հայաստանի և Արցախի հանրապետություններից դուրս է բնակվում հայության 2/3-ը: Այս իրողությունը «Հայկական սփյուռքի պատմության» դասընթացը դարձնում է առավել կարևոր ու արդիական:

Սփյուռքագիտության ոլորտում մասնագետների պատրաստումը կոչված է ապահովելու Հայաստանի Հանրապետության պետական գերատեսչությունների և առանձին ոլորտային կառույցների կադրային ռեսուրսի կարիքները: Կարող ենք նշել, որ սփյուռքագիտության ոլորտում այսօր ակտիվ գործունեություն է ծավալվում ԵՊՀ պատմության ֆակուլտետի Սփյուռքագիտության ամբիոնը: Ոլորտի մասնագետները իրենց մասնագիտական կարողությունները ներդնում են ոչ միայն կրթության և գիտության ասպարեզում, այլև մասնագիտական-փորձագիտական դաշտում հանրությանը և պետական տարբեր կառույցներին տրամադրում են խորհրդատվություն և հրապարակային վերլուծություններ:

Հաշվի առնելով այսօր աշխարհում տիրող իրողությունները և այն մարտահրավերները, որի առջև կանգնած են ինչպես Հայաստանի Հանրապետությունում ապրող հայերը, այնպես էլ Սփյուռքում բնակվող նրանց հայրենակիցները՝ շատ այժմեական է Սփյուռքի մասին ունենալ հիմնարար գիտելիքներ և կատարել ժամանակի պահանջին համապատասխան հետազոտություններ, որպեսզի ունեցած գիտելիքներով և փոխադարձ ջանքերով հնարավոր լինի հաղթահարել առկա դժվարությունները: Սփյուռքի շարունակական հետազոտումը կարևոր է նաև այն պատճառով, որ ժամանակակից աշխարհը շատ արագ փոփոխվելով՝ իր ազդեցությունն է թողնում նաև հայկական սփյուռքի վրա: Այս փոփոխությունների արդյունքում արտերկրում գոյություն ունեցող հայկական համայնքները ևս ստիպված են լինում ենթարկվել տարատեսակ վերադասավորումների: Տնտեսական և քաղաքական զանազան պատճառներով տեղի են ունենում ներսփյուռքյան տեղաշարժեր [1]: Երբեմնի որոշ հզոր համայնքներ թուլանում կամ կազմաքանդվում են, որի արդյունքում առավել ստվարանում ու հզորանում են նախկինում գոյություն ունեցող փոքր ու մեծ համայնքները կամ առաջանում են նոր համայնքներ այլ երկրներում: Այս ամենը առաջացնում է բազմաթիվ խնդիրներ: Այդ պատճառով էլ շատ կարևոր է Սփյուռքի ճանաչողությունը, որը հնարավորություն կտա բավականին բարդ իրավիճակներում գտնվող մեր հայրենակիցներին ցուցաբերել տարատեսակ օգնություն (բարոյական, նյութական և այլն)՝ հնարավորինս նպաստելով նրանց հայրենադարձությանը:

Ի դեպ, հայրենադարձության թեման հանդիսանում է «Հայկական սփյուռքի պատմության» կարևորագույն թեմաներից մեկը, քանի որ սփյուռքահայերի հայրենադարձությունը այսօր ևս

* *Հոդվածը ներկայացվել է 09.04.2020 թ., գրախոսվել՝ 01.06.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] *Տե՛ս Ղանալանյան Տ., Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1950-1980-ական թվականներին, Ե., 2016:*

բավականին արդիական խնդիր է: Խորհրդային շրջանում մի քանի անգամ կազմակերպվել է սփյուռքահայերի հայրենադարձություն[1], որը շատ մեծ նշանակություն է ունեցել Հայաստանի զարգացման համար: Չնայած այն հանգամանքին, որ այդ գործընթացը հիմնականում կազմակերպվել է բավականին բարդ սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում, ունեցել է բազմաթիվ թերություններ, դժվարությունները և խնդիրներ, այնուամենայնիվ տեղի ունեցածը ընդհանուր առմամբ դրական մեծ նշանակություն է ունեցել ինչպես Սփյուռքի, այնպես էլ Խորհրդային Հայաստանի համար: Ներկայում ևս Հայաստանի իշխանությունները միտված են նմանատիպ գործընթացի կազմակերպմանը: Պետական տարբեր կառույցներում և գերատեսչություններում տեղի են ունենում շարունակական քննարկումներ՝ պայմանավորված հայրենադարձության կազմակերպման և դրան նպաստող օրենսդրական դաշտի ստեղծման և հստակեցման հետ:

Ճանաչելով Սփյուռքը և ծանոթանալով սփյուռքահայ տարբեր համայնքներում ապրող հայերի իրական վիճակին՝ հնարավոր կլինի շատ ավելի արդյունավետ կերպով համագործակցել Սփյուռքի հետ ներկա փուլում, որը կնպաստի հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանը: Հայկական սփյուռքի պատմության ուսումնասիրությունը կօգնի անցյալի փորձը հաշվի առնելով՝ անել ճիշտ հետևություններ և կազմակերպել առավել անցնցում և նպատակային ներգաղթ, որը փոխելով երկրի ժողովրդագրական պատկերը՝ կնպաստի Հայաստանի զարգացմանը:

Այսպիսով կարող ենք փաստել, որ «Հայկական սփյուռքի պատմության» դասավանդումը կարևոր և արդիական է մի քանի պատճառներով: Այն նպաստում է հայ ժողովրդի պատմության ճանաչողության ամբողջացմանը, օգնում հայրենիք-սփյուռք կապերի զարգացմանը, նպաստում որակյալ մասնագետների պատրաստմանը, որոնք համալրում են Սփյուռքի հետ կապված համապատասխան գերատեսչությունները, աջակցում Սփյուռքում առկա որոշակի խնդիրների լուծմանը, ինչպես նաև սփյուռքահայերի հայրենադարձության անցյալի փորձերը ներկայացնելով՝ նպաստում ապագայում նմանատիպ գործընթացների առավել հաջող կազմակերպմանը:

ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Դասընթացն իրականացվում է մի քանի գիտակարգերի տվյալների և մեթոդական մոտեցումների համակցությամբ: Առանձին թեմաներ ուսուցանվում են պատմության, միջազգային հարաբերությունների, աշխարհագրության, քաղաքագիտության և այլ տվյալների ու գիտելիքների համադրմամբ: Այն հնարավորություն է տալիս դասընթացը ներկայացնել առավել ամբողջական և ընդգրկուն ձևով: Հայկական սփյուռքի պատմության դասընթացը ուղեկցվում է պատմաքաղաքական, պատմաշխարհագրական, մշակութային, երկրագիտական գիտելիքների համադրական-քննական մատուցմամբ: Այն հաշվի է առնում նաև նշված գիտակարգերից յուրաքանչյուրի մեթոդական առանձնահատկությունները:

Հայկական սփյուռքի ձևավորման գործընթացը ներկայացվում է պատմաքաղաքական գիտելիքների միջգիտակարգային մոտեցումների համադրման շրջանակներում: Հայերի սփռվածությունն ու տեղաբաշխումը աշխարհում մատուցվում է պատմաշխարհագրական տվյալների

[1] *Տե՛ս Եղիազարյան Ա., Անանյան Մ., Հովհաննիսյան Ա., Հովհաննիսյան Է., Հովսեփյան Մ. Վարդանյան Հ., Հայրենիք-սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Ե., 2017, էջ 121-145; Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Ե., 1985; Սարգսյան Ն., Սփյուռքահայերի 1946-1948 թթ. մեծ հայրենադարձը, Ե., 2014; Ստեփանյան Ա.., XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Ե., 2010; Առաքելյան Հ., Ռամկավար ազատական կուսակցության դերակատարությունը 1946-1948 թթ. հայրենադարձության կազմակերպման գործընթացում, «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր», համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2009, էջ 75-84; Մելքոնյան Է., Ստալինի աշխարհաքաղաքական նկրտումները և հայերի հայրենադարձությունը 1946-1948 թթ., «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. Հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, էջ 22-31; Վիրաբյան Ա., 1946-1948 թթ. մեծ հայրենադարձությունը. հիմնահարցեր և խնդիրներ, «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. Հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, էջ 8-21; Հովհաննիսյան Ա., Սփյուռքահայերի հայրենադարձությունը 1921-1926 թթ., «Ակունք»գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1 (15), Ե., 2017, էջ 102-108; Ստեփանյան Ա., Սարգսյան Հ., Իրանահայերի ներգաղթն ու վերաբնակեցման խնդիրները (1946–1970-ական թվականներին), «Պատմաբանասիրական հանդես», 2009, № 1, էջ 43-54; Ստեփանյան Ա., Հայրենադարձության հայկական փորձը (1946-1948 թթ.), «Պատմաբանասիրական հանդես», 2010, № 1, էջ 149-160:*

ու գիտելիքների համադրմամբ: Յուրաքանչյուր երկրում առկա հայկական համայնքների առանձնահատկությունների ուսումնասիրությունը տեղի է ունենում տվյալ երկրի երկրագիտական տվյալների ներկայացման շրջանակներում, որը տեսանելի է դարձնում նաև օտար մշակույթի ազդեցության սահմանները ուսումնասիրվող համայնքում:

ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Նախնական փուլում տեսական որոշակի գիտելիքների ձեռքբերումից հետո[1] աստիճանաբար սկսվում են կիրառվել նաև գործնական մոտեցումներ: Այլ կերպ ասած, սկսվում է ակտիվ ուսումնառության փուլը, որը համադրվում է տեսական մոտեցման հետ: Ակտիվ ուսումնառությունը հնարավորություն է տալիս ուսանողին ամբողջովին ներգրավվել դասապրոցեսի մեջ: Ուսանողի շարունակական մասնակցությունը դասապրոցեսին նպաստում է նրա տարբեր ունակությունների կատարելագործմանը (վերլուծություն, համադրություն, գնահատում և այլն): Ակտիվ ուսումնառության մոտեցումը գիտելիքի, տարատեսակ հմտությունների և տարբեր մոտեցումների գործնական կիրառության հնարավորություն է, որի արդյունքում ուսանողը ստուգում և կատարելագործում է իր ունակությունները: Եթե դասընթացի նախնական փուլում ուսանողը տեսական գիտելիքներ է ստանում՝ հիմնականում լսելով, ապա ակտիվ ուսումնառությունն իրենից ենթադրում է մասնակցության առավել բազմաձև և գործնական ձևաչափ: Ուսանողը ոչ միայն լսում է, այլև քննարկում, կատարում տարաբնույթ անհատական և խմբային աշխատանքներ, լուծում խնդիրներ, առաջ քաշում գաղափարներ՝ զարգացնելով անհատական մտածողության ունակությունը: Տարատեսակ քննարկումների միջոցով վերլուծվում, համադրվում, ամփոփվում և գնահատվում են պատմական տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած բռնագաղթերն ու արտագաղթերը, որոնք նպաստել են հայկական գաղթօջախների, իսկ այնուհետև՝ հայկական սփյուռքի առաջացմանը: Փորձ է արվում հասկանալ և ներկայացնել վերոնշյալ երևույթների հիմնական պատճառները: Ուսանողները, ստանալով անհրաժեշտ գիտելիքներ և ծանոթանալով մեթոդական հմտություններին, կարող են դրանք կիրառել զանազան ուսումնասիրություններ կատարելիս:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ

Ուսանողների հետազոտական ունակությունների բարելավումը տեղի է ունենում զանազան եղանակներով՝ հայկական սփյուռքի պատմության տարատեսակ աղբյուրների, ուսումնասիրությունների, գիտական գրականության և տարաբնույթ այլ հրատարակությունների (տպագիր մամուլ, դաշտային հետազոտությունների արդյունքներ, համացանցային նյութեր և այլն) քննական համաբերում, հետազոտական բնորոշ ձևերի ներկայացում, խնդիրների սահմանում ու դրանց լուծման ուղիների պարզաբանում և այլն: Դասընթացի շրջանակներում ուսանողը ստանալով անհրաժեշտ գիտելիքներ և յուրացնելով տարատեսակ աղբյուրների և գիտական գրականության հետ աշխատելու կարողություններ՝ կարողանում է առանձնացնել և մշակել թեմաներ, կատարել վերլուծություններ, սահմանել ու քննել հիմնահարցեր:

Սկզբնաղբյուրների և գիտական հետազոտությունների համաբերում: Հայկական սփյուռքի պատմության վերաբերյալ կան բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ, արխիվային նյութեր, մամուլի և համացանցային հրապարակումներ: Հաշվի առնելով այս իրողությունը՝ ուսանողներին անհրաժեշտ է առաջին հերթին իրենց հետազոտական կարողությունները բարելավելու համար համակողմանիորեն ծանոթանալ հայկական սփյուռքի պատմության բազմաթիվ սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների: Ուսանողներին պարբերաբար հանձնարարվում են առանձին թեմաներով վերլուծական աշխատանքներ, որի նպատակը զանազան սկզբնաղբյուրների և տարատեսակ ուսումնասիրությունների հաղորդած տեղեկությունների համաբերումն ու թեմատիկ համակարգումն է: Արդյունքում ուսանողները հնարավորություն են ստանում

[1] *Տե՛ս Андреев И., Теория как форма организации научного знания, Москва, 1979; Марков Б., Проблемы обоснования и проверяемости теоретического знания, Ленинград, 1984.*

տիրապետելու հայկական սփյուռքի պատմության բոլոր շրջափուլերի մասին տեղեկություններին: Իրենց տրամադրության տակ ունենալով թեմային վերաբերող նյութերը՝ ուսանողներին հնարավորություն է տրվում քննական մոտեցմամբ դասակարգել հիմնականն ու օժանդակը: Բացի այդ՝ ուսանողը ծանոթանում է գիտական գրականության և աղբյուրային նյութում առկա դրույթների կիրառման և հղման մեխանիզմներին և այլ կարևոր հմտությունների:

Հետազոտական աշխատանքներ: Տարատեսակ աղբյուրների և մասնագիտական գրականության համաբերման, վերլուծման և ամփոփման արդյունքում ուսանողները իրականացնում են գիտահետազոտական աշխատանքներ[1]: Հետազոտվող թեմայի շրջանակներում առանձնացվում և քննության են առնվում այն հիմնահարցերը, որոնք առավել կարևոր են և արդիական: Անհատական աշխատանքների և թեմատիկ քննարկումների արդյունքում ուսանողները զարգացնում են հետազոտական հմտությունները, որը նրանց թույլ է տալիս կատարել ճշգրիտ եզրահանգումներ ուսումնասիրվող խնդիրների վերաբերյալ:

Քննարկումներ: Լսարանային քննարկումների ժամանակ ուսանողները ներկայացնում են իրենց կատարած վերլուծական աշխատանքներն՝ առանձնացնելով թեմային վերաբերող զանազան կարևոր ու արդիական հիմնահարցեր: Սա հնարավորություն է տալիս լսարանում գտնվող բոլոր ուսանողներին մասնակցելու տարատեսակ առարկայական քննարկումների և բանավեճերի, որը կատարելագործում է նրանց քննավերլուծական մտածողության կարողությունները:

Գիտական հրապարակումներ: Այն ուսանողները, որոնք աչքի են ընկնում հաջողված վերլուծական աշխատանքներով, հնարավորություն են ստանում իրենց վերլուծությունները հրապարակելու գիտական հանդեսներում: Նմանատիպ աշխատանքների հեղինակների հետ իրականացվում է անհատական աշխատանք, որի նպատակը ուսանողի վերլուծական աշխատանքի համապատասխանեցումն է գիտական հոդվածի չափանիշներին:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Դասընթացում ընդգրկված թեմաները լիովին արտացոլում են հայկական սփյուռքի պատմությունը՝ ձևավորումից մինչև մեր օրերը: Ուսանողները ամբողջական պատկերացում են ստանում նաև հայկական սփյուռքում տարբեր ժամանակներում առկա հիմնահարցերի մասին:

Դասընթացի սկզում կատարվում է պատմական ակնարկ, որտեղ խոսվում է «Հայ գաղթօջախների պատմության[2]» թեմայի մասին: Մանրամասն ներկայացվում են արտագաղթերը, բռնագաղթերը և դրանց նպաստող հանգամանքները: Թեմայի շրջանակներում խոսվում է նաև օտար երկրների պատմության մեջ հայերի և հայկական համայնքների դերակատարման մասին: Քննարկվում են նաև թեմային վերաբերող հետազոտություններ:

«Սփյուռքայնացման գործընթացը» թեմայում ուսանողներին հանգամանալից ներկայացվում է հայկական գաղթօջախների վերածումը կազմակերպված սփյուռքի[3]: Խոսվում է տեղի ունեցած գործընթացի պատճառների և ժամանակագրական սահմանների մասին: Բացատրվում է «Ցրոնք» կամ «Սփյուռք» տերմինի նշանակությունը և կիրառումը հայ իրականության մեջ: Հատուկ ուշադրություն է դարձվում ազգային կուսակցությունների գործունեությանը Սփյուռքի համախմբման, ուղղորդման, կազմակերպման և ձևավորման գործում: Խոսվում է նաև թեմային առնչվող հիմնահարցերի և ուսումնասիրությունների մասին:

---

[1] *Տե՛ս Берков В., Научная проблема, Минск, 1984; Ковальченко И., Методы исторического исследоянания, М., 2003.*

[2] *Տե՛ս Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, գիրք Ա-Բ, Ե., 1964, 1967; «Հայ գաղթաշխարհի պատմություն», (միջնադարից մինչև 1920 թ.), խմբ. Վ. Միքայելյանի, հ. 1-3, Ե., 2003-2013; Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002; Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ գաղթականության, հայերի ցրումը աշխարհի կանական մասերը, հատ. 1-3, Կահիրե, 1941, 1955, 1961; Բարխուդարյան Վ., Հայկական գաղթավայրերը, Ե., 1991; «Էջեր հայ գաղթավայրերի պատմության», խմբ. Վ. Բարխուդարյանի, Զ. Եկավյանի, Ե., 1996:*

[3] *Տե՛ս Եղիազարյան Ա., Անանյան Մ., Հովհաննիսյան Ա. և այլք, նշվ. աշխ., էջ 9-22; Եղիազարյան Ա., Հայ սփյուռքի պատմության պարբերացումը, «Հայագիտության հարցեր», 2014, N 2, էջ 33-51; Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.), Ե., 1975; Դալլաքյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Ե., 2004:*

«Հայերի տեղաբաշխումը ժամանակակից աշխարհում» թեման ուսանողներին լիարժեք պատկերացում է տալիս արդի փուլում հայերի սփռվածություն մասին[1]: Խոսվում է հայկական համայնքներ ունեցող երկրների աշխարհագրության և ընդհանուր առանձնահատկությունների մասին՝ հիմք ընդունելով տարածաշրջանային, սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային շատ ընդհանրություններ: Մանրամասն ներկայացվում է տիպաբանման այն սկզբունքը, որի համաձայն խմբավորվում են սփյուռքահայ համայնքները: Ըստ ընդհանուր բնութագրերի՝ հատուկ ուշադրություն է դարձվում յուրաքանչյուր խմբի մաս կազմող համայնքների յուրահատկություններին:

«Հայկական համայնքները Արևելքի երկրներում» թեման ներկայացնում է Արևելքի երկրներում գոյություն ունեցող հայկական համայնքների առանձնահատկությունները: Անդրադարձ է կատարվում դրանց կարևորությանն ու նշանակությանը: Խոսվում է Արևելքի երկրներում առկա հայկական համայնքների[2] ներհամայնքային կառուցվածքի, ազգապահպանության մեթոդների, ինչես նաև համահայկական կառույցների գործունեության մասին: Քննության է առնվում նաև Արևելքի հայկական համայնքների առանցքային դերակատարումը հայկական սփյուռքի կայացման գործում:

«Հայկական համայնքները Արևմուտքի երկրներում» թեման անդրադառնում է Արևմուտքի երկրներում գոյություն ունեցող հայկական համայնքներին[3]՝ սկսած ձևավորումից մինչև մեր օրերը: Հանգամանալից կերպով ներկայացվում են համայնքների սկզբնավորումն ու անցած ճանապարհը: Նկարագրվում են նշված երկրների հայկական համայնքներում առկա իրողությունները և տիրող մթնոլորտը: Հիշատակվում են նաև բոլոր այն կազմակերպությունները, որոնք կարևոր են համայնքների կյանքում: Ի մի են բերվում արդի փուլում առկա հիմնահարցերը՝ համեմատվելով անցյալում գոյություն ունեցող համանման խնդիրների հետ:

«Հայկական համայնքները հետխորհրդային երկրներում» թեման ուսանողներին լիարժեք պատկերացում է տալիս նախկինում Խորհրդային Միության մաս կազմող և ներկայումս անկախ պետություններ հանդիսացող բոլոր երկրների հայ համայնքների ամբողջական պատմության մասին[4]: Թեմայի առաջին հատվածում նկարագրվում է հայկական համայնքների վիճակը հետխորհրդային երկրներում խորհրդային շրջանում, իսկ երկրորդ փուլում ներկայացվում են նշված

---

[1] *Տե՛ս Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ գաղթականության, հայերի ցրումը աշխարհի կանական մասերը, հատ. 1-3, Կահիրե, 1941, 1955, 1961; Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Ե., 1962; «Հայ սփյուռք» հանրագիտարան, Ե., 2003; Дятлов В., Мелконян Эд., Армянская диаспора: очерки социокультурной типологии, Е., 2009:*

[2] *Տե՛ս Վարժապետյան Ս., Հայերը Լիբանանի մեջ, հատ. 1-5, Բեյրութ, Ֆերլոն, 1951-1983; Հովհաննիսյան Ն., Մերձավոր արևելքի և Սիրիայի հայ համայնքները և նրանց հեռանկարները, Ե., 2015; Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Ե., 2013; Թյությունջյան Պ., Լիբանանի ժողովրդի ազատագրական պայքարը և հայ համայնքը (1920-1990), Ե., 1992; Փաշայան Ա., Հարությունյան Լ., Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Ե., 2011; Թոփուլյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Ե., 1986; նույնի՝ Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, Ե., 1978; Հարությունյան Ն., Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Ե., 2002; Ֆիշենկճեան Ա., Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը 1946-1970 թթ., Ե., 2018; Չալըմյան Ն., Լիբանանի հայ համայնքը երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում (1970-ական թվականներ), Ե., 2002; Փահլեվանյան Հ., Իրանահայ համայնքը (1941-1979), Ե., 1989; Աճեմյան Հ., Հայերը Հորդանանի մեջ, Լոս Անջելես, 1989; Մամուրի Հ., Հայերը Երուսաղեմի մեջ ամենահին ժամանակներից մինչև մեր օրերը, Ե., 1963; Մուրադյան Ս., Իրաքի հայ համայնքը, Ե., 1997; Օհանեան Ս., Իրաքի հայ համայնքը 20-րդ դարուն, Ե., 2016; Հովհաննիսյան Ա., Սիրիայի հայկական գաղթօջախը և նրա դերը հայ-սիրիական հարաբերություններում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Գ, Ե., 2014, էջ 398-408; Migliorino N., (Re)constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-Cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis, New York, Oxford, 2008.*

[3] *Տե՛ս Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը, Ե., 2000; Մարտիրոսյան Լ., Ամերիկահայությունը երեկ և այսօր, Բեյրութ, 1973; Զեբիյան Լ., Հայերը Իտալիո մեջ, Վենետիկ, 1990; Պողոսյան Ս., Թռուցիկ ակնարկ Մարսելի հայ գաղութի պատմության վրա, Ե., 2005; Հակոբյան Հ., Հայերը և Իտալիան, Ե., 1999; Տիգրանյան S., Անգլիան և հայերը, Եր., 1994; Մինասյան Գ., Բելգիան և հայերը (III դարից մինչև մեր օրերը), Ե., 2016; Mirzaian A., Armenians in Australia and New Zealand, Sydney, 1966; Bakalian A., Armenian-Americans: From being to Feeling Armenian, New Brunswick-London, 1993.*

[4] *Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Ե., 2014; նույնի՝ Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում, 1941-1991 թթ., Ե., 2016; Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ., Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն, Ե., 2015; Հարությունյան Յու., Ռուսաստանի*

երկրներում գոյություն ունեցող համայնքները հետխորհրդային շրջանում: Կատարվում են համեմատություններ՝ վեր հանելու երկու փուլերի տարբերություններն ու ընդհանրությունները:

«Հայկական համայնքները Հարավային Ամերիկայի երկրներում» թեման իր մեջ ընդգրկում է նշված տարածաշրջանի երկրներում առկա հայկական համայնքների պատմությունը[1]: Թեմայի շրջանակներում ուսանողները ծանոթանում են Հարավային Ամերիկայի երկրների հայկական համայնքների կազմավորման հանգամանքներին, ժամկետներին և զարգացման առանձնահատկություններին: Ներկայացվում են այդ համայնքների ներկա վիճակը և խնդիրները: Հատկապես կարևորվում են նշված հայկական համայնքների կյանքում առանցքային դերակատարում ունեցող կազմակերպությունները, որոնց կատարվում է հատուկ անդրադարձ:

«Հայրենիք-սփյուռք հարաբերությունները» թեմայի շրջանակներում ուսանողները պատկերացում են ստանում հայրենիք-սփյուռք հարաբերությունների բոլոր փուլերի մասին[2]: Անդրադարձ է կատարվում բոլոր այն կազմակերպություններին ու կառույցներին, որոնք նպաստել են այդ հարաբերությունների կայացմանն ու զարգացմանը: Հատկապես կարևորվում են խորհրդային շրջանում եղած սահմանափակումների և խոչընդոտների պայմաններում գոյություն ունեցած շփումները: Ներկայացվում է նաև խորհրդային շրջանում մի քանի փուլերով իրականացված սփյուռքահայերի հայրենադարձությունը: Անդրադարձ է կատարվում հայրենիք-սփյուռք հարաբերությունների արդի փուլին և ներկայացվում այն իրողությունները, որոնք առկա են հետխորհրդային շրջանում: Արվում են համեմատություններ, տարատեսակ վերլուծություններ, քննվում բազմաթիվ խնդիրներ:

«Համասփյուռքյան կազմակերպությունները» թեման ներկայացնում է Սփյուռքում գործող գրեթե բոլոր համասփյուռքյան կազմակերպությունների և կառույցների գործունեությունը[3]:

հայկական սփյուռքի մասին. Մոսկվայի և Կրասնոդարի հայերի էթնոսոցիոլոգիական հետազոտություն, Ե., 2011; Григорьянц А., Армяне Средней Азии. История, современное положение, переспективы, Е., 1994; Минасян С., Этнические меньшиства Грузии: потенциал интеграциина примере армянского меньшинства страны, Е.,2006.

[1] Տե՛ս Մատթէոսեան Վ., Հարաւային կողմն աշխարհի: Հայերը Լատին Ամերիկայի մեջ սկիզբէն մինչեւ 1950, Անթիլիաս, 2005; նույնի՝ Նիւթեր Արժանթինի հայ գաղութի պատմութեան, Ե., 1996; նույնի՝ Ուրուկուայի հայ համայնքը (սկզբէն մինչև 1950), Պէյրութ, 2002; Վարդանյան Ե., Պրազիլիո հայ գաղութը, Բուենոս Այրես, 1948; «Հայ սփյուռք» հանրագիտարան, Ե., 2003:

[2] Տե՛ս Եղիազարյան Ա., Անանյան Մ., Հովհաննիսյան Ա. և այլք, նշվ. աշխ.; Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), Ստեփանակերտ, 2010; Պետրոսյան Ք., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001 թթ., Ե., 2011; Համազասպյան Վ., Սովետական Հայաստանը և Սփյուռքը, Ե., 1980; Մակարյան Լ., Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը 1921-1937 թթ., Ե., 2018; նույնի՝ Հայաստանի օգնության կոմիտեի համագործակցությունը հայրենակցական միությունների հետ, «Հայոց պատմության հարցեր» (գիտական հոդվածների ժողովածու), Ե., 2012, № 13, էջ 230-240; Բաղայան Ա., Խորհրդային Հայաստան-Սփյուռք կապերի պատմության փուլերը, «Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ.» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, էջ 69-76; Մելքոնյան Է., Հայաստանի երրորդ Հանրապետության և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, «Սփյուռքագիտություն. տեսության և պատմության հարցեր» տարեգիրք, Ե., 2012, էջ 102-122; նույնի՝ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների փոխակերպումը 20-րդ դարում. քաղաքական իշխանության խնդիրը, «Սփյուռքի հեռանկարները գլոբալացվող աշխարհում» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2012, էջ 101-141; Միրզախանյան Ռ., Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերը 1966-1990 թվականներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, № 2, էջ 209-218; Եղիազարյան Ա., Հայրենիք-սփյուռք հարաբերությունների գերակա ուղղությունները (1960-ական թվականներից մինչև օրս), «Հայագիտության հարցեր», Ե., 2016, 3, էջ 96-105; նույնի՝ «Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության գործունեության հիմնական ուղղությունները 1944-1966 թթ.», «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2016, № 3, էջ 78-85; նույնի՝ «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները 1964-1985 թթ.», «Պատմություն և հասարակագիտություն», Ե., 2015, № 1, 59-76; "Armenia-Diaspora Relations: 20 Years Since Indipendence", A Publication of Policy Forum Armenia, 2010.

[3] Տե՛ս Խուրշուդյան Լ., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Ե., 1964; Դալլաբյան Կ., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն (1921-1990 թթ.), գիրք 1, Ե., 1999, գիրք 2, Ե., 2007; նույնի՝ «Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության», Ե., 1994; նույնի՝ «Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում» Ե., 1962; «Պատմագրություն Հայ յեղափոխական դաշնակցության», քառահատոր շարք, հ. Դ. Ե., 2003; Ղարախանյան Վ., Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեանի հայանպաստ գործունեությունը, Ե., 2008; Համազասպյան Վ., Հայկական բարեգործական ընդհա-

Արժևորվում է մշակութային, մարզական, բարեգործական միությունների դերը սփյուռքի կյանքում: Հատկապես կարևորվում է այդ կառույցների ներդրումը հայապահպանման գործում:

«Եկեղեցին Սփյուռքում» թեման անդրադառնում է Սփյուռքում գործող հայկական եկեղեցական բոլոր կառույցներին[1]: Թեմայի շրջանակներում ներկայացվում է Հայ եկեղեցու նշանակալի դերակատարումը հայկական համայնքների կյանքում: Հատկապես կարևորվում է եկեղեցու՝ ինքնության ու մշակույթի պահպանմանն ու ազգահավաքին ուղղված գործունեությունը:

«Սփյուռքի հեռանկարը» թեմայի շրջանակներում ներկայացվում են հայկական սփյուռքում առկա բոլոր փոփոխություններն ու տեղաշարժերը, ինչպես նաև առավել կարևոր ու արդիական հիմնահարցերը: Այս ամենը համադրելով անցյալում տեղի ունեցած շարունակական զարգացումների և ժամանակակից աշխարհում առկա գործընթացների հետ՝ ուսանողները պատկերացում են ստանում բոլոր այն հնարավոր միտումների վերաբերյալ, որոնց կարող ենք ականատես լինել սփյուռքահայ համայնքներում հետագայում:

ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ

Դասընթացի ընթացքում ստացած գիտելիքների և հմտությունների շնորհիվ ուսանողները ունակ կլինեն ներկայացնել հայկական սփյուռքի ձևավորման ու զարգացման պատմությունը, ինստիտուցիոնալ կառուցվածքը, հայապահպանման մեխանիզմները, համասփյուռքյան կառույցների ու կազմակերպությունների առանձնահատկությունները, առկա հիմնահարցերն ու գոյություն ունեցող մարտահրավերները:

Գործնական ունակությունների ձեռք բերման արդյունքում ուսանողները կկարողանան իրականացնել գիտահետազոտական աշխատանք՝ գործածելով ձեռք բերված տարատեսակ հմտություններն ու կարողությունները: Ամփոփելով ու գնահատելով սփյուռքահայ համայնքներում առկա իրողությունները պատմական տարբեր ժամանակաշրջաններում և ծանոթ լինելով ներկա հիմնախնդիրներին՝ ուսանողները ունակ կլինեն կանխատեսումներ անել Սփյուռքի հեռանկարի վերաբերյալ:

Ара Оганесян, УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА "ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ". Курс "История армянской диаспоры" имеет важное научно-исследовательское, учебно-методическое и практическое значение. Курс предоставляет студентам основательные знания об образовании и развитии армянской диаспоры. Он знакомит студентов с институциональной структурой и механизмами самосохранения в армянских общинах. Студенты также познают своеобразность общеармянских организаций, осуществляющих деятельность в диаспоре. В процессе обучения студенты получают также методические знания. Проводится активное обучение. Студенты учатся ставить задачи и решать их. Они не только слушают, но и думают, анализируют, обсуждают и исследуют определенные ситуации. Практические работы развивают у студентов аналитическое мышление.

Ключевые слова: *диаспора, община, курс, история, обучение, важность, метод, исследовательская работа, обсуждение, анализ, общинная организация.*

նուր միությունը և Հայաստանը, Ե., 2001; Մելքոնյան Էդ., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Ե., 2005; Սիմոնյան Հ., Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Ե., 1968; Սարգսյան Ա., Պետրոսյան Ա., Սփյուռքահայ կազմակերպությունները, Ե., 2002; Գասպարյան Ս., Սփյուռքահայ մշակութային և հայրենակցական միությունները արդի շրջանում, «Պատմաբանասիրական հանդես», 1970, № 3, էջ 274-283; Նահապետյան Կ., Ամերիկայի հայկական համագումարի կազմավորումը, նպատակներն ու կառուցվածքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1997, № 3, էջ 25-32:

[1] Տե՛ս Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1972; Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ռուսաստանի Դաշնության հայության կրոնադավանանքային կողմնորոշումները, Ե., 2011; Թութիկյան Վ., Հայ Ավետարանական եկեղեցին (1846-1996 թթ.), Դետրոյտ, 1996; «Հայ սփյուռք» հանրագիտարան; Тунян В., Армянская церковь за рубежом. Начало XXI в., Е., 2016; Акопян В., Армянская Апостольская церковь на Ставрополье и Тереке, Пятигорск, 2000.

Ara Hovhannisyan, EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE "HISTORY OF ARMENIAN DIASPORA". The course **"**History of Armenian Diaspora**"** has an important research, educational and practical significance. The course provides the students with a basic knowledge of the creation and development of the Armenian Diaspora. During the course, the students are introduced to the institutional structure and mechanisms of self-preservation of Armenian communities. They are informed about the originality of pan-Armenian organizations that operate in the Diaspora. The students are also provided with methodological knowledge during the teaching. Active training is being conducted. They learn to set tasks and solve them. They not only listen, but also think, analyse, discuss and observe certain situations. Practical work develops the students' analytical thinking.

Key words: *Diaspora, community, course, history, training, importance, method, research work, discussion, analysis, community organization.*